Խնդիրներ, բարձրացրած հարցեր.

1. Հողերի անբերրիության հարցը:
2. Ոռոգվող հողատարածքների ոռոգման սակագների հարցը:
3. Պարարտանյութերի թանկությունը և ձեռք բերման դժվարությունները:
4. Գյուղ մթերքների /կաղամբ, բազուկ/ ցածր գնային քաղաքականությունը /իրացման դժվարությունները/:
5. Խաղողի հանձման պայմանագրերի կնքման դժվարությունները:
6. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի անբավարար վիճակը:
7. Բաց դրենաժային և փակ դրենաժային համակարգերի մաքրման հարցը:

Բյուջեյի կատարողական 01-07-2011թ դրությամբ

	պլան	փաստացի	%
1. Հողի հարկ	5170.0	2719.2	52.6
2. գույքանարկ Մ	2400.0	1360.2	56.7
3. գույքահարկ Շ	385.0	61.1	15.9
4. վարձակալություն	600.0	174.9	29.1
5. տեղական տուրք	155.0	146.3	94.4

01.01.2011-30.06.2011թթ-ի ընթացքում Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.Ճշգրտվել է Հայթաղ համայնքի հողի հարկի բազայում առկա թերությունները:

2.Ճշգրտվել է կադաստրային գծագրման ժամանակ աշխատանքային վրիպումները և անճշտությունները:

3.Հայթաղ համայնքի գյուղատնտեսության խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության գարնանային աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:

4. Գյուղապետարանի աջակցությամբ ապրիլ և հունիս ամսվա ընթացքում մաքրվել են փակ դրենաժային համակարգը և 200մ բաց դրենաժային համակարգը, որը չաշխատելու հետևանքով վնաս էր հասցնում ազգաբնակչությանը:

5. 01.01.2011 - 30.06.2011թթ կազմակերպվել և անց են կացվել երկու՝ եռօրյա սեմինարներ համայնքի ազգաբնակչության հետ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում «Ձրից դեպի շուկա» թեմայով: Գյուղապետարանի աջակցությամբ նախապատրաստվում են հիսունից ավելի բնակիչների համար երկարաժամկետ վարկավորման ծրագրեր:

6. 01.01.2011 – 30.06.2011թթ. դրությամբ համայնքի ազգաբնակչության կողմից ստացվել են 34 բողոքներ, որից բավարարվել է 28-ը: Բողոքները հիմնականում վերաբերվում են բնակչության սոցիալ-տնտեսական վիճակին, սեփականաշնորհված հողերի անբերրիությանը, ավանդների վերադարձման գործընթացին, հոսանքների և խմելու ջրի հետ կապված պարտքացուցակներին:

7. Ձինկոմիսարիատի հետ համատեղ կազմակերպվել է գարնանային զորակոչային աշխատանքները և ԴՕՍԱԱՖ-ում սովորող ուսանողների ճանապարհային ծախսերը հոգացել է գյուղապետարանը; /հինգ ուսանողներ/:

8. Հայթաղի ազգաբնակչությանը աջակցել են ձեռք բերելու 20տ ամոնյակային սիլիտրա պարարտանյութ՝ 7000դրամ արժողությամբ:

9. Մարտ-ապրիլ ամսվա ընթացքում գյուղապետարանի և ազգաբնակչության համատեղ ուժերով կատարվել է աղբահանություն, համայնքի փողոցները, մշակույթի տան, հուշասյուների տարածքները, մանկապարտեզի տարածքը մաքրվել են խոտից: Համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցը մաքրվել է մոտ 16000մ:

10. Մարտ ամսվա ընթացքում գյուղապետարանի օժանդակությամբ և համայնքի բնակիչների աջակցությամբ, դպրոցի աջակցությամբ մաքրվել է դպրոցի տարածքը:

11. Բարեկարգման աշխատանքներ են կատարվել հուշասյուների համալիր տարածքում:

12. Գյուղապետարանի օժանդակությամբ խրախուսվել են սպորտային միջոցառումները: /կինգ-բոքսինք, ծանրամարտ, ֆուտբոլ/:

13. Ապրիլի 5-ին զոհված ազատամարտիկ Հրայր Կարապետյանի մահվան 15-րդ տարելիցը նշվեց դպրոցի հետ համատեղ:

14. Մայիսի 9-ին նշվեց Հայրենական պատերազմի 62-րդ տարելիցը և գյուղապետարանի կողմից Հայրենական պատերազմի մասնակիցները պարգևատրվեցին և դրամական օգնություն ստացան:

15. Գյուղապետարանի և ազգաբնակչության աջակցությամբ մշտապես մաքրվել են համայնքի ներսում գտնվող ոռոգման ցանցերը:

16. Հունիս ամսին Հայթաղի գյուղապետարանի կողմից ձեռք է բերվել 500 հատ վարդի տնկիներ և լրացվել բարեկարգվել է գյուղապետարանի, դպրոցի, Հայրենական և Արցախյան զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:

17. Ազգաբնակչությանը գյուղապետարանը օգնել է ձեռք բերելու անհրաժեշտ բույսերի սերմացուներ /վարունգ, լոլիկ, կարտոֆիլ, ծմերուկ, սեխ,սոխ,և այլն/:

18. Ազգաբնակչության հետ ճշգրտվել են հողի հարկի, գույքահարկի հետ կապված ապառքների ցուցակները և ողջ ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտականությունները կատարելու համար:

19. Հունիսին ավարտվել է ցորենի բերքահավաքի հետ կապված աշխատանքները և 2 կոմբայնների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ժամանակին բերքահավաքը կազմակերպել:

20.Մայիս ամսին գյուղապետարանի կողմից կազմակերպվել են դասընթացներ, աշխատակիցների և ազգաբնակչության համար (գյուղատնտեսություն և համակարգչային ուսուցում և ինտերնետային ուսուցում), և գյուղատնտեսության վարկավորման վերաբերյալ ծրագրեր մշակելու ուղղությամբ:

21.Հունիս ամսին Հայթաղի գյուղապետարանի կողմից լրացուցիչ մաքրվել են բոլոր ներտնտեսային առուները, խցանված հատվածները, մաքրվել և բարեկարգվել է դպրոցի, Հայրենական և Արցախյան զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:

22. Մայիս և հունիս ամիսների ընթացքում բարեկարգվել է հինգ դաշտամիջյան ճանապարհներ:

23 .Մարտ ամսվա ընթացքում գյուղապետարանի օժանդակությամբ և համայնքի ազգաբնակչության և դպրոցի կոլեկտիվի և աշակերտների աջակցությամբ մաքրվել է դպրոցի և մանկապարտեզի տարածքը:

24 .01.01.2011-30.06.2011թթ.-ընթացքում Հայթաղի գյուղապետարանի կողմից դպրոցի աշակերտներին տրամադրվել են 6 անվճար ավտոբուսներ Երևան քաղաք այցելելու և մշակութային միջոցառումներին մասնակցելու համար /թատրոն կինո/:

25.Մարտ-ապրիլ ամիսներին «Մուսալեռ» ՓԲԸ էլեկտրոցանցի և գյուղապետարանի հետ համատեղ տարվել են աշխատանքներ ազգաբնակչության հոսանքի անխափան աշխատանքները ապահովելու համար /կտրվել են ճանապարհների հոսանքի լարերին խանգարող բոլոր ծառերի ճյուղերը կամ ծառերը, ծգվել կամ փոխվել են ոչ պիտանի հոսանքալարերը/:

26. Գյուղապետարանի և ազգաբնակչության ուժերով մաքրվել է Սայաթ-Նովա փողոցում գործող կոյուղու մեկ հատվածը:

27. Գյուղապետարանի և խմելու ջրի էջմիածնի գրասենյակի հետ համատեղ տարվել են աշխատանքներ գյուղը անխափան խմելու ջրով ապահովելու համար: Փոխվել են վթարային խողովակները:

28. Գյուղապետարանի և էլեկտրոցանցի հետ համատեղ տարվել են աշխատանքներ համայնքի փողոցների լուսավորումները և մշակույթի տան շրջակայքի լուսավորումը կարգավորելու կապակցությամբ: Փոխվել և վերանորոգվել են 10 լուսային սարքեր:

29. Ապրիլ ամսին բարեկարգվել է երկու դաշտամիջյան ճանապարհները:

30.Հայթաղ համայնքում մահացած բոլոր բնակիչների ընտանիքներին հատկացվել է ֆինանսական օգնություններ:

31.Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից տարրական դասարանների /1-4-րդ դասարաններ/ աշակերտների համար Նոր տարվա միջոցառումներին/ Երևան քաղաքում և դպրոցում/ տրամադրվել է ֆինանսական օժանդակություններ:

32. 01.01.2011-30.06.2011թթ. «Հազարամյակի մարտահրավերներ Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ և Հայթաղ համայնքի գյուղապետարանի 15% համաֆինանսավորմամբ Հայթաղ համայնքի ոռոգման երկրորդ կարգի ջրանցքի վերանորոգման աշխատանքների ընթացքում կառուցվել է 1523մ ոռոգման երկրորդ կարգի ջրանցքներ:

33. Ապրիլ- մայիս-հունիս ամիսների ընթացքում բարեկարգվել են Հայթաղ համայնքի Ա.Առաքելյան փողոցը, Եղիշե Չարենցի փողոցը, Մենուայի փողոցը, Ծ. Իսակովի փողոցը:

34. Նախակրթական դասարանների համար սկսվել են դպրոցի տարածքում վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվում են օգոստոսի 30-ին:

35. Տարրական դասարանների համար / I-IV դասարաններ/ ձեռք է բերվել 999,0 հազար դրամ արժողությամբ ճաշարանային գույք /20 սեղան և 80 աթոռ/:

36. Հայթաղ համայնքի դպրոցական հրաձիգների համար կազմակերպվել է մրցություններ գյուղապետարանի օժանդակությամբ /ֆինանսական, տրանսպորտային/ և դարձել են Արմավիրի մարզի հաղթողներ:

37. Մայիս-հունիս ամիսներին Հայթաղ համայնքի օժանդակությամբ բոլոր երեխաները գրանցվել են անձնագրային պետական ռեգիստրում: Խնդիրներ ունեցող բնակիչների հետ աշխատանքները շարունակվում են: